ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍԱՄ-ՍՈՒՐ ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/92 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Աղբամանը պետք է պատրաստված լինի մետաղական հիմնակմախքով: Աղբամանի ընդհանուր բարձրությունը հատակից 650 մմ: Վերևի ձագարաձև վերին մասի տրամագիծը Φ450 մմ, իսկ ձագարաձև հատվածի ներքի մասի տրամագիծը Φ320 մմ, ձագարաձև հատվածի բարձրությունը 150 մմ: Աղբամանի ներքևի հատվածի տրամագիծը 320 մմ, բարձրությունը մինչև ձագարաձև հատվածը 500 մմ: Վերևի ձագարաձև հատվածի վերին մասը պատրաստված է Φ16 մմ մետաղական խողովակից գլանված Φ450 մմ տրամագծով, գլանված հատվածի ծայրերի միացումը եռակցման միջոցով է, մեկ եռակցման մասով և լավորակ մշակված: Աղբամանի պատերի 40x3 մմ մետաղական ժապավենը, առանց կտրվածքի /ամբողջական/ եռակցվում է Φ16 մմ տրամագծով գլանված հատվածին և Φ450 մմ տրամագծով ձագարաձև հատվածի վերին հատվածին, պետք է միացման կետերն ու եռակցված հատվածները լինեն լավորակ մշակված, Φ320 մմ տրամագծով մասում ժապավենի հեռավորությունը մեկը մյուսից 17-18 մմ: Աղբամանի ստորին հատվածը, որտեղ զոդված է 40x3մմ մետաղական ժապավեն պետք է փաթաթված լինի 50x3մմ մետաղական ժապավենով: Աղբամանի կափարիչը պետք է ամրացված լինի աղբամանին մետաղական շղթայով, իսկ աղբամանի կափարիչի անցքը՝ Φ150 մմ: Աղբամանի կափարիչը պետք է պատրաստված լինի 1.8-2մմ մետաղական թիթեղից և հաստությունը ապահովելու համար աղբամանի կափարիչի արտաքին մասով պետք է փաթաթվի 20x3մմ կամ 25x3մմ մետաղական ժապավենով, իսկ կափարիչի անցքի Φ150 մմ տրամագծով պետք է փաթաթվի 10x10 մմ մետաղական խողովակ՝ եռակցման միջոցով: Աղբամանի մեջ տեղադրված է ցինկապատ մետաղական թիթեղից պատրաստված դույլ, որը պետք է պատրաստվի 0.4-0.5 մմ հաստությամբ

	ցինկապատ թիթեղով, պատերին լինեն անցքեր Φ10 մմ, ունենա բռնակ, վերևի հատվածը՝ բռնակի ամրացման մասը ուժեղացված: Աղբամանը ներկել գրունտով, այնուհետև վերջնական լավորակ ներկով: Աղբամանը ամբողջությամբ մետաղական է, բոլոր մետաղական դետալները ամրացված են եռակցման միջոցով և բոլոր եռակցված մասերը պետք է լինեն հղկված: Աղբամանը ունի 3 անցք գետնին ամրացնելու համար: Աղբամանները պետք է ունենան առնվազն 1 տարվա երաշխիքային սպասարկում: Աղբամանները մատակարարվում են փաթեթավորված պոլիէթիլային թաղանթով: Աղբամանները պետք է լինեն չօգտագործված և պատրաստված լինեն նոր՝ չօգտագործված նյութերից: Աղբամանի հետ պետք է տրամադրվի մեկ հատ պահեստային դույլ: Օգտագործած բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին: Աղբամանների տեղափոխումը և տեղադրումը պետք է իրականացվի մասնակցի միջոցների հաշվին՝ ըստ Պատվիրատուի կողմից նախանշված վայրերի: Մինչ ապրանքի աբողջական մատակարարումը Մատակարարը պետք է Պատվիրատուին ներկայացնի պատրաստի նմուշ՝ ապահովելով սույն տեխնիկական բնութագրի պահանջները:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО САМ-СУР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/92 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	